

16709

Ամենայն հարկով


Բարեկամաց Գործարար

Հարկ-Գործարար

891.99

U-21

1882



891.542-1

Ս-261

Կ. ՍԱՌԿԱԹԵԱՆԻ

ԻՆՆԵՍՏԵՂՆՈՒԹԻՒՆԻՆԻՐ.



Ի ՆՈՐ ՆԱԹԻՋԵՒՆՆ

Տղարան Աերովրէի Յարու թեան.

1882

W 730


891.99
U-21
W



138

4. ՍԱՌԿԱԹԵԱՆԻ

ԲԱՆԵՍԱՏԵԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:



1001
3619



3697

ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼ — ՀՕՐ,

ԳԼԱՊԱՐ ՄԱՐԿԱՍԻԱՆ ՓՈԳՈՎԵԱՆՑԻ,

ՕՐՀՆԵՍԱԼ ՑԻՇԱՑԱԳԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԵՐԵՎԱՆԻ ԿՆԵՆՏՆԱԿԱԼ:

2003

Дозв. Пенз. С.-Петербургъ, 12 Мая 1882 г.

Տպարանը Սերգիևի Յարուժիկեանի և Նոր Նախիջևանի:

Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն .

Նուիրելով բանաստեղծութիւնքս ընթերցանէր հայ
հասարակութեանը, ևս խոստովանում եմ նոցա միջե
թերութիւնները, մանաւանդ լեզուադիտական կող
մանէ: Բայց այդ թերութեանցը ստեն մի փոքր ի շատէ
բարեմիտ ընթերցող ներողամիտ պիտի լինի, թէ որ ի նկատի
ունենայ այն հանգամանքը, որ ևս մեր աշխարհագրաւ լե
զուն բոլորովն ինքնուրոյն կերպով սովորել եմ, կարգաբով
„Սշակ“, „Փորձ“ և այլ պարբերական հրատարակու
թիւնք և զրքեր: Պարզ ասեմ. ևս հայերէն սովորել եմ
Սոսիւտա Վազարեան Ճեմարանում, ուր միայն հինգ
դասատուն անցիլ եմ և օկարութեանս պատճառաւ բախ
տաւորութիւն ունեցած չեմ այնպէղ աւարտել, ուսմանս
ընթացքը: Եւր հինգ տարին գործածել եմ միայն դրաբաւ
սովորելու (վերոյիշեալ ճեմարանում աշխարհագրաւ չեն
սովորեցնում): այն էլ կրիւ տարի, առաջին և երկրորդ
դասասաններում, այնպիսի ուսուցիչ եմ ունեցել, որից
փոխանակ բան սովորելու, միշտ յանդիմանութիւններ եմ
լսել և միայն այն պատճառաւ, որ Նոր Նախիջևանցի եմ,
որովհետև յարգոյ ուսուցիչս Նոր Նախիջևանցիներուն
ատուակը: Եւր յանդիմանութիւնքը միայն այն ժամա
նակ վերջացան, երբ փոխվեցայ կրթող դասատուն, ուր
հայոց լեզուն ուսուցանումէ Պ. Ս. Շահազիզեանը:

Այս վերջեր միշտ խմացել է և այժմ ևս խմանում է զնահատել աշակերտի գիտութիւնը և աշխատասիրութիւնը: Սորա մօտ սովորել եմ մնացեալ երեք տարին: Սա իւր դեղեցիկ դեղեցիկ բացասութիւններով ու մեկնութիւններով, հացոց լեզուի քերականական ձևերը և դարձուածները ուրիշ լեզուներու ձևերի և դարձուածների հետ համեմատելով՝ այնպէս զրաւեց իմ ուշադրութիւնը, որ ես վճռեցի լաւ ուսանել իմ մայրենի լեզուն և կարճ ժամանակից յետոյ՝ ողջ ճեմարանում ամենայնաջադէմ աշակերտներից մինը դարձայ. բայց ախտոս, որ բոլոր սովորածս զրաբառ էր, թէև զրաբառ և աշխարհաբառ մայր ու որդի են:

Այս սիրելի ուսուցչես միայն երկու բանաստեղծութիւն ցոյց եմ տուել, «Ի մահ Օ. Մ.» և «Ի մահ Աղեքսանդրի Յ.» և ստացել եմ խրատոյց և բաժախտութիւն: Այժմ սուրբ պարտականութիւն եմ համարում հրապարակապէս յայտնել նորան իմ խորին շնորհակալութիւնը և յարգանքը: Բանաստեղծութեանցս մի բանիսը, որոց մեծ մասը գրել եմ ճեմարանում, պէտք է յայտնի ընին «Փարոս» ի ընթերցողներին:

Առ հասարակ բոլոր բանաստեղծութիւններիս նիւթը առած է իրական կեանքից և նոցա մէջ ոչինչ երևակայական չկայ: Այն կոյսերը, որոց մասին խօսում եմ սիրոյ երգերիս մէջ, բոլորը ողջ են և գուցէ կարգան այս տողերս:

Իսկ ինչ որ վերաբերվում է կեդիաներիս, նոցանով ընթերցողը կարող է շատ լաւ ծանօթանալ հոգւոյս այլ և այլ ժամանակուայ տրամադրութեան հետ: Նոքա արտայայտում են իմ ներքին աշխարհը: «Ողբում է հոգիս:

Մօտ է փոթորիկ «, «Մանկութիւն «, «Յուսահատութիւն « և այլք ինձ համար մեծ նշանակութիւն ունին, որովհետե բացայայտում են հոգւոյս ախտը տրամադրութիւնը և յիշեցնում են ինձ մի քանի չարաբաստիկ անցքեր:

Այժմ մնում է խօսել միայն թարգմանական բանաստեղծութեանցս մասին: Այս այսուկ պարտաւոր եմ խոստովանել, որ դեռ պատրաստ չեմ Շիլլեր և Վեյթի թարգմանելու և արած թարգմանութիւնքս թերի են. բայց որովհետե Բողբ բանաստեղծութիւնքս ժողովուած են այս գրքոյիս մէջ — ես չկամեցայ որ սքրա բացառութիւն կազմեն: Այս ուրախ եմ սուսուել ընտիր թարգմանածները տեսնել. բայց քանի որ չկան այդպիսիքը, սքրա չեն կարող սիրով չընդունուիլ:

Գիտեմ, այս գրքոյիս կարդացած չկարդացած՝ շատերը, ո՛վ գիտէ, ի՛նչ հասկացողութիւն պիտի կազմեն իմ վերայ, պիտի բամբասեն (որ ա՛խ, շայաստան, շայաստան, չեմ ասել), մինչև անդամ ծաղրեն ինձ. բայց ես չեմ կարող մոռանալ և այն, որ կ'գտնուին մի քանի անձինք, որոնք իմ զրուածքը ըստ արժանւոյն կ'զնահատեն: Այդ մի քանիսը ինձ աւելի միջնարդն, քան շատերը յուսահատեցնում: Պէտք չէ մոռանալ, որ այս բանաստեղծութիւնքը մի հիմնադրարի, մի միջնակարգ ուսումնարանի աշակերտի, գրուածք են:

1882 թ. Մարտի 29.

Վ. Սարգսյան.

Ռուսով (Դոնի վերայ):

1879 թ.

I.

ՈՐՐ ՄԱՆՈՒԿ.

Աղքատ մանուկ եմ
Ընհայր ու անմայր,
Չունիմ ինձ մի քոյր,
Չունիմ ինձ եղբայր:

Տեսէք իմ շորեր
Պատառ պատառ են.
Չունիմ մի կոշիկ
Որ ոտքս հանգնեմ:

Տեսէք իմ երես
Դեղնած և լղար,
Ոչ որ թշուառիս
Չէ տալիս մի ճար:

Տեսէք իմ աչեր
Երցունքից ուռած,
Իմ միակ ընկեր
Նդեղէ միշտ լաց:
Ուրիշ մանուկներ
Կուշտ ճաշ են ուտում,

Գալիս է գիշեր, —
 Մահիճ են մտնում:
 Իսկ ես, թշուառս,
 Երբեմն չոր հաց
 Ընդամ չեմ գտնում.
 Մեռնե՞մ եմ քաղցած:
 Չոր գետնի վերայ
 Խոնաւ սենեկում
 Ըռանց մի բարձի
 Պարկում եմ տրտում:
 Ինչո՞ւ ես ծնայ,
 Եկայ այս աշխարհ...
 Մե՞ծ է տեսնելու
 Միայն լաց, աշխար:
 Մե՞ծ է ողբալու
 Իմ վաղ որբութիւն,
 Մե՞ծ է պատմելու
 Իմ խեղճ դրութիւն:
 Մահը շատ անգամ
 Կոց է տանում,
 Որո՞նք նորանից
 Վախում են, սարսում:
 Թող ինձ նոցա տեղ
 Տանի միւս աշխարհ:
 Ե՛ի, այդ սև մահը
 Կեանք է ինձ համար:

Յունվար. Մոսկուա:

II.

ԳԻՇԵՐ.

(ՆՄԸՆՈՂՈՒԹԻՒՆ).

Ի՛նչ սաստիկ քամի..... նա մերթ գոռումէ,
 Իբրև կատաղած, վայրենի գազան,
 Մերթ բարակ ձայնով տխուր լալիս է,
 Իբրև երեխայ մէկ անբաւական:

Մերթ մեր գրանն է բարկութեամբ խփում,
 Իբրև վաստակեալ, սաստիկ հարբած մարդ,
 Մերթ աղատօրէն մի երգ է երգում,
 Իբրև խաշնարած անհոգ և անդարդ:

Կայեցէք այնտեղ: Ըհա անտառում
 Ծառերի միջից կրակ է երևում:
 Դա մի ճրագ է: Ընկունջ գիւղացին
 Գեռես չէ մտել իւր չոր անկողին:

Կորա երեխան միշտ լաց է լինում.
 Մայրը բարկացած սաստումէ որդուն.
 ,, Խո՞ւմես, քամին..... նա քեզ է կանչում.
 Ը՛նտ ձայնդ կտրիր, —նա քեզ է խնդրում:

Յունվար. Մոսկուա:

III.

ՎԱՐԳԻՍ.

Անուշահոտ դու կարմիր վարդ,
 Որտեղեց ես, որ երկրեց :
 Կանաչ գարնան հրաշալի՜ զարդ,
 Այիզըն առած եղեմից :
 Հեռացելես մօրդ ծոցից,
 Եյն է ճիւղը՝ ուր ծնար
 Եւ թողնելով հողդ մայրենի՜
 Եկելես այս տար աշխարհ :
 Ելլ գեփիւռը չէ տարածում՝
 Քեզ շարժելով՝ քո հոտը,
 Երգիչ սոխակն էլ չէ երգում
 Ա երագ սիրոյ իւր երգը :
 Եւ աւօտու ցօղկը թաց
 Չէ առողում քեզ հիմա,
 Եւ նազելի կուսին հայեացք
 Չէ իջանում քո վերայ :
 Իբրև պանդուխտ մի պատանեակ,
 Որ թողելէ սիրելուն,
 Կ'թառամես շուտով մենակ
 Հեռո՛ւ մօրից՝ մեր երկրում :

Յունիս . Մոսկուա :

IV.

Ա՛խ, մի՛ երգիր այդ մեղեգի,
 Ուրախութեան եղանակ :
 Ա՛րդովումէ դա իմ հոգի
 Օուարթացնելու փոխանակ :
 Ե՛րոյն տեսիլներ, նոյն երազներ
 Ինձ երևան գալիս են,
 Ե՛րոյն ցնորամիտ, հին պատկերներ
 Մանուկ երգչիս խարումեն :
 Ե՛հա պարտէզն երևումէ
 Եւ քիս առջ գեղեցիկ,
 Ե՛հա առուն զուարթ վազումէ,
 Ե՛հա սոխակն երգեցիկ :
 Ե՛հա կարմիր վարդի թուփը,
 Ուրախագէ՛մ որոյ մօտ
 Հիւսումէի ես իմ փունջը,
 Միշտ, ամենայն առաւօտ :
 Ե՛հա շիթեր վառ ցայտումէ
 Եւ ատրուանը պարտիզի
 Եւ նա նստած՝ ընթեռնումէ
 Ոտանաւորք Բայրընի :
 Ե՛կ՛ մի՛ երգիր, ա՛խ, մի՛ երգիր, —
 Գա ինձ համար մի ողբ է :
 Կամ՝ մեղեգիդ շուտով փոխիր
 Եւ կամ՝ խոպառ դագարէ :

Յուլիս . Մոսկուա :

V.

ԶՕՐԱԿԱՆՔ ՎԱՐԴԱՆԱԹ.

Շնուհ հնչեցէք անուշաձայն,
 Եղբարք, փողեր մեծ մարտի.
 Մենք պատրաստ ենք և միարան
 Օրհնելի ի սեր Յիսուսի:

Մեզ չէ կարող արդ վախեցնել
 Ո՛չ հուր, ո՛չ մահ և ո՛չ զէնք,
 Որովհետև լաւ է մեռնել
 Քան որանալ իւր օրէնք:

Յուրիս. Մոսկուս:

IV.

ԱՆՑԱՌԻ ԱՐՔԱԹ.

(ԳԷՕԹԷ):

Ի՞նչ ձիաւոր է, որ այդպէս արագ
 Ուղիղ գնումէ գիշեր ժամանակ:
 Դա մի ծեր հայր է և սիրուն մանկիկ
 Նորա գրկումը պարկած հանդարտիկ:

«Որդեակ, երեսդ ինչու ծածկում ես:» —
 Ընտառի Ըրքայն տեսնումեմ ես
 Երկար մօրուքով, մթնադոյն թաղով:
 «Դա մեզն է այդպէս երևում զէմքով:» —

Դու, սիրուն մանկիկ, եկ իմ յետեից.
 Ուրախ կ'լինես, բաւական ինձնից.
 Կ'տեսնես պէսպէս տեսօք ծաղիկներ,
 Կ'տեսնես մօրս ոսկեթել շորեր: —

Հայրիկ, իմ հայրիկ, չե՞ս լսում ինչեր
 Ինձ խոստանումէ. ինչ սիրուն բաներ:
 «Խաղաղ կաց, որդեակ, հանդարտվիր անգին.
 Չոր տերևները շարժումէ քամին:» —

Երի քեզ տանեմ, շնորհադեղ մանկիկ.
 Քեզ լաւ կ'պահեն դատերքս գեղեցիկ.
 Գիշերը ուրախ կերգեն, կ'պարեն,
 Օր օր ասելով՝ քեզ կ'ննջեցնեն: —

Հայրիկ, իմ հայրիկ, մի՛ թէ չես տեսնում
 Ծառերի մէջը աղջիկներ սիրուն:
 «Որդեակ, տեսնումեմ, ես գիտեմ, որդեակ.
 Ըյն ուռիներն հին, բարձրահասակ:

Ես քեզ սիրումեմ: Աթէ դու չգաս —
 Կ'քաշեմ, կ'առնում — յետոյ կ'զղջաս:
 Հայրիկ, իմ հայրիկ, ահա ինձ բռնեց,
 Ըհա իմ կրծքիս հարուածմը տուեց:

Եւ ձիաւորը սաստիկ վրդովուած՝
 Իբրև մի արծիւ, թռաւ՝ ահագին
 Եւ իւրեանց բակը հասած, չհասած.
 Ա՛խկոտ մանուկը աւանդեց հոգին:

Սեպտ. Մոսկուս:

VII.

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ:

Հոգիս մռայլ — ես սգումեմ

Ընրադդ կեանքիս սև օրեր .

Ըրտասվումեմ, երբ յիշումեմ

Կորած, ոսկի իմ ժամեր :

Ո՛ւր հեռացաւ իմ մանկութիւն,

Կենաց ուրախ ժամանակ,

Երբ ես անհոգ, իբրև թռչուն,

Խաղումէի միշտ անյագ :

Երբ ծանօթ չէր ինձ տխրութիւն,

Դառն թոյնը սև օձի, —

Վազումէի օրն ի բուն,

Չգիտէի ցաւն ազգի :

Երբ կուսական սև սև աչեր

Չէին գերում անմեղիս,

Երբ չունէի պէսպէս ըզներ, —

Մարուր, պայծառ էր հոգիս :

Ո՛ւր գնացիր, ո՛ւր դու փախար,

Ո՛վ մանկութիւն նազելի .

Ոսկի ժամերս հեադ տարար,

Տարար անդարձ և գերի :

Եկան օրեր, օրեր տխուր,

Ընրոյժ վէրքեր բերելով

Եւ խնդութիւն, զերդ ծովի ջուր,

Ըրագ փախաւ փախչելով :

Եւ այնուհետ՝ ես ըսկըսայ

Եւ կեանքսգալ և ողբալ .

Քնարով երգել սովորեցայ, —

Սկան լարե՛րս ինձ հետ լալ :

Եւ այնուհետ՝ ճանաչեցի

Բարին, չարը իսկապէս .

Կարծես քնից ես զարթնեցի, —

Տեսայ սիրուն մի պարպեղ :

Եւ այդ պարտեզ փնէղէրքն է .

Վորա ծառեր մարդիկ են,

Որ յետ պտուղ տալոյ՝ պէտք է

Երկրից ելնեն, մեռանեն :

Ըյդ պարտեզը հաճելի է

Բախտաւորին յաւիտեան .

Վորա մէջը վայելում է

Վա խնդութիւն անսահման :

Ես չ'գտայ ուրախ մի ժամ

Բախտաւորաց ինձոյքում,

Վորա համար նա մինչ անգամ

Ըտելի է ինձ թուում :

Ուր ուրիշներ քաղումեն վարդ

Ընուշահոտ և գարնան, —

1001
6196



Ես քաղեցի անվերջ ինձ դարդ ,
 Դարդ սոսկալի բռնութեան :

Հոգիս մաշլ — ես սգումեմ :

Ընբաղդ կեանքիս սև օրեր :

Արտավումեմ, երբ յիշումեմ
 Կորած, ոսկի իմ ժամեր :

Նոյեմ. Մոսկուս :

VIII.

ԴԱՏԱՊԱՐՑԵԱՆ.

Մնաս բարեա՛ւ, իմ մայրենի սիրուն աշխարհ,
 Մնաս բարեա՛ւ, իմ տուն անգին, տուն հայրական,
 Որ տեսել ես օրօրոցս, ուրտեղ իմ մայր
 Կերակրել է ինձ իւր կաթով քաղցրահամ :

Մնաս բարեա՛ւ, հայր ծերունի, հայր պատուելի .
 Հեռանո՛ւմեմ ես քեզանից արդ յաւիտեան .
 Տո՛ւր օրհնութիւն հնազանդ որդուդ — այդ որ աւնի .
 Խաղաղ հոգով նա կանցնէ իւր օրերը տխրութեան :

Մնաս բարեա՛ւ, իմ ամուսին, ո՛հ, նազելի .
 Մնաս բարեա՛ւ, հոգւոյս հատոր, իմ սիրելի .
 Բաժանվումեմ ես քեզանից, ան, ակամա՛յ,
 Դորա պատճառ բախտ նենգաւոր և խաբէբայ :

Արտավումեմս ինչո՛ւ համար : Աւտով սրբիւր
 Արտասուքդ : Մեղք չե՛ն փայլուն քո սև աչեր :
 Արտասուքով ծանր շղթաս դու չես կտրիր,
 Որ մեռմէ թշուառականիս և անհամբեր :

Արի՛ մօտիկ, ինձ մօտեցիր, ո՛վ անձկալի —
 Վերջին անգամ կրծքիս վերայ կուրծքդ սեղմեմ .
 Վերջին անգամ քո այտերից ես համբոյր մի
 Ընոյշ քաղեմ, վերջին անգա՛մ՝ քեզ փայտայեմ :

Չե՛ս տեսնելու այլևս դու ինձ յաւիտեան :
 Ո՛ւմ դու սրտիդ գաղտնիքները պիտի յայտնես,
 Ո՛ւմից շորի համար դու փող պիտի խնդրես,
 Ո՛վ քեզ, ասա՛, պիտ՛ կերակրէ այսուհետեւ :

Սիրուն որդեակք, եկէք այստեղ և լսեցէք
 Ձեր անբախտ հօր վերջին խրատը սուրբ, օգտակար .
 Ձեր մօր աղի արտասուքը դո՛ւք սրբեցէք —
 Կա հալուել է, նա մաշուել է և ձեզ համար :

Դուք պիտ՛ լինիք ձեր դժբաղդ մօր յոյսը միակ .
 Իսկ նա, աւա՛ղ, և մայր ձեր և հայր հարազատ :
 Եկէք մօտիկ, ձեզ համբուրեմ, սիրուն որդեակք .
 Եւ ջերմ մաղթեմ ձեզ երկար կեանք և օրեր շատ :

Դա՛նն վիճակ : Այս թշուառից էլ թշուառ եմ —
 Այսուհետեւ երբէք էլ ձեզ տեսնելու չեմ :
 Մնաք բարեա՛ւ, ամենքեան և ամեն բան,
 Մնաք բարեա՛ւ, հեռանումեմ ես յաւիտեան :

2 Գեկտ. Մոսկուս :

IX.

Հեռու երկիր թուաւ, փախաւ

Սիրուն թռչուն մեզանից :

Իմ սիրասուն քոյրն հեռացաւ

Ուրիշ աշխարհ այստեղից :

Շուտով կ'գայ կանաչ գարուն

Եւ թռչունը կ'գառնայ .

Իայց, ա՛խ, քուրիկն իմ սիրասուն

Երբէք, երբէք յետ չիգայ :

Գեկտ. Մոսկուա :

1880 թ.

ԱՌԱՉԻՆ ՍԵՐ.

Շուտով, մուգայ իմ սիրական,

Ի՛նչ Բնարս ոսկեշար . . .

Ես պիտ' երգեմ գեղեցկութեան

Մաքուր, պայծառ, մեծ հանճար :

Ո՛վ օրհորդ հիանալի,

Շքեղ դշտոյ կուսանաց,

Պսակ համայն արարածի,

Փառք և պարծանք ծնողաց :

Ինչպէ՛ս ասեմ, բացայայտեմ

Ձեզ զգացմունք իմ սրտի,

Երբոր ինքս ես չ'գիտեմ

Յաւուտ սիրտս ինչ կամի :

Նա այրվումէ, բորբոքվումէ,

Իբրև կրակ հնոցի .

Նա բոցալի՛ց Ձեզ սիրումէ,

Սակայն սիրով տղայի :

Պէտք չէ ինձ սիրտ պատասխանող .

Սիրոյ պարզև ոչինչ է

Աւաղի, սիրտիւն ինձ չէք կարող .
 Ինձ մեղքացէք — այդ բաւ է :

Յունգար. Մոսկուս :

XI.

Ի ՄԱՅ Զ. Մ.

(ԱՇԵԿԵՐՏԻ ԼԵԶՆԵՐԵՆ ՃԵՄԵՐՆԻ) :

Ի ծաղկազարդ գարնանայնոյ,
 Երբ բնութիւն ինքն խայտալով .
 Չամենեցուն զմեր հոգի
 Թով է անձառ իմն զօրութեամբ,
 Երբ ջինջ առուակ մրմունջ հանէ
 Ի մանկական իւր հոսանաց,
 Երբ յանտառի երգիչ սոխակ
 Գեղգեղէ զերգ իւր սիրանոյշ,
 Երբ զեփուռն սիրէ զխունկ
 Կարմիր վարդոյ, ծաղկան քնքոյշ, —
 Զկարացեալ զրահաւորիւ
 Ընդդէմ վճռոյն վեհ Արարչի՝
 Ընդ աստեղօք ցուրտ հիւսիսոյ
 Էն՝ ի ծնողաց յօտար երկրի
 Թառամեցա՛ր դու զերգ ծաղիկ :

Լուեաց քնար : Եւ հէք մուսայր
 Թեթև թևօք փախեալ ի քէն :

Գաղարեցա՛ր ոսկերերանդ
 Էնչել զսէր, զմիութիւն .
 Եւ վաստակ թողեալ՝
 Ստեր ի նեղ, սխուր տապան .
 Եւ այդ տապան ապա եղաւ
 Ի մենաւոր, խոր գերեզման :

Գու կենդանեաւ սերմանէիր
 Չսերմն բարեաց ի սիրտս մանկանց .
 Չտարաբախտ վիճակ ազգիդ
 Կոցա պատմել սովոր էիր :
 Եւ լսէ՛ն քաղցր ձայնիդ .
 Ուսանէին ի քէն խոկալ,
 Չհայրենիս զկիսաքանդ
 Սիրել զսէր մաքուր, անկեղծ :

Գու կենդանեաւ զողջոյն գիշեր
 Աշխատէիր և անձանձիր,
 Գրականութեան յասպարիզ
 Ծառայութիւն առնել ազգիդ
 Յոյժ ցանկացեալ. սակայն վախճան
 Եդ քո կամաց անգութն մահ .
 Յափշտակեաց զոգիդ հաշեալ,
 Չի հանգից է մարմինդ խոնջեալ :

Ո՛հ, դուք ծաղկունք անուշահոտ,
 Չարդարեցէք զգերեզման
 Ազնիւ, մանուկ բանաստեղծին .

Իսկ դու, ծիծառ, սիրուն թռչնակ,
 Թռի՛ր, գնա՛ ի Հայաստան.
 Կիստ ի վերայ ծառոյ միոյ
 Ղէ՛մ յանդիման քերթօղի տան.
 Հայեաց, հայեաց ի լուսամիտ
 Եւ զանմխիթար մայրն տեսեալ՝
 Ի սիրտինս խօսեաց մեղմիկ.
 Մի՛ լար, ո՛վ կին, մի՛ դու ողբար.
 Օ՛ր արտասուք, իբրև զառու.....
 Ո՛չ գլխովին դու զրկեցար --
 Կրկին յերկի՛նս տեսցես զօրդիդ:

Մայիս. Մոսկուս:

XII.

8 ՅՈՒՆԻՍԻ.

Ողբումէ հոգիս: Մ'օտ է փոթորիկ.....
 Պատրաստ է ցաւոտ սիրտս պատառվել:
 Հեռացի՛ր, ո՛վ կոյս, հեռո՛ւ, գեղեցիկ, --
 Դու արտասուքս կարող չես սրբել:

Քո այդ սև աչեր, քո այդ վարդ այտեր
 Ինձ համար ծուխ են, խարուսիկ երազ.
 Քո այդ մանկական և գողարիկ ձևեր
 Ոչինչ են այժմ, ոչինչ, իմանաս:

Եւ այս աշխարհում ինձ նեցունկ չունեմ
 Ո՛չ բախտ, ո՛չ ոսկի և ո՛չ գեղեցիկ.
 Օ՛րդ աշնան ծաղիկ՝ հաղիւ կենումեմ
 Եւ կ'գլորվեմ, երբ փչի հողմիկ:

Ինձ սպասումէ մույլ գերեզման:
 Կ'մտնե՛մ մէջը շուտով անվաստակ
 Եւ կ'մոռանայ աղբը թորգոմեան
 Իւր մանուկ երգչին անյայտ, անհաշակ:

Միայն կաղաչեմ, եթէ ունես գութ,
 Երբոր, դիակս սառնացած, անշունչ՝
 Սև դագաղ գնեն, — թափի՛ր արտասուք,
 Ո՛հ, թափի՛ր. սակայն ծածուկ, լուռ ու մունչ:

Մոսկուս:

XIII.

ՆՈՒԷՐ.

Ա՛ռ, հրաշագեղ կոյս — Հայկուհի,
 Փոքրիկ փունջս վարդերից,
 Չնչին նուէր մոռանալի,
 Հիւսած սիրոյ սողերից:

Ե՛ր քո ձեռը և անսալով
 Լնայտ ձայնին Վնարիս,
 Արտի՛ւ իմա ինչ դորանով
 Կամի՛ յայտնել քեզ հոգիս:

Ընդհանուր արդեօք դու կ'ըսես
 Մանուկ երգչիս ինդրուած ,
 Թե նուէրը իմ կ'մերժես ,
 Ընդամ ձեռք քո չառած :

Ոչէ՛նչ... մերժի՛ր փոքրիկ ընծաս ,
 Մի՛ ընդունիր ձօնս քնքոյշ .
 Միայն նայի՛ր անմեղ վերաս ,
 Միայն ժպտի՛ր ինձ անոյշ :

Յուրիս՝ Ստիբիկայ դիւշ, Եկատերինսդորի մօտ :

XIV.

Ս Ի Ն Ե Օ Ն .

(ԳԵՕԹԵ) :

Գիտե՛ս արդեօք այն երկիրը, ուր լիմաններ են ծաղկում,
 Ուր ոսկեգոյն և քաղցրահամ նարինջներ են բուսանում,
 Ուր փռումէ կապոյտ երկնից առողջարար զով հովիկ,
 Ուր աճումէ բարձր դափնի և մրտենի գեղեցիկ :

Գիտես արդեօք՝ այնտեղ, այնտեղ կ'ցանկայի
 Թուռել գնալ այժմ քո հետ, ո՛վ սիրելի :

Գիտե՛ս արդեօք դու այն տուէր շքեղապարդ, փառահեղ
 Ուր փայլումէ պերճաշէիճը իւր վարդերով հրաշագեղ,
 Ուր արձաններն կարեկցարար ինձ ասումեն վարմացած :

«Նչ ես տիրել, թշուառ աղջիկ, ի՛նչ է քո հետ պատահած» :

Գիտե՛ս արդեօք՝ այնտեղ, այնտեղ կ'ցանկայի
 Թուռել գնալ այժմ քո հետ, ո՛վ անձկալի :

Գիտե՛ս արդեօք դու այն լեանը... նա ամպերով է պատած .
 Լ՝յնտեղ ճամբայ որոնում իւրեան ջորին վաստակած ,
 Լ՝յնտեղ վժին այրերումը միշտ սողումեն սև օձեր ,
 Լ՝յնտեղ բլուրք ջարդըւումեն, և ցայտումեն ալիքներ :
 Գիտե՛ս արդեօք՝ այնտեղ, այնտեղ ցանկամ երթալ .
 Թո՛ղ, ո՛վ հայրիկ պատուական, թո՛ղ թուռել գնալ :

Սեպտ. Մոսկուա :

XV.

Ա Ռ Մ . Ա .

Ես քեզ տեսայ վերջին անգամ,
 Իբրև անմեղ հրեշտակ,
 Երբ դու անհոգ, որպէս շուշան՝
 Ժպտում էիր անուշակ :

Ես կուսական քո հայեացքում
 Գտայ զրախտ սրբութեան
 Եւ կարգացի նորա միջում
 Ընմեղութիւն մանկական :

Ես լսեցի քո մեղեդի
 Եւ կարճ զրոյց փայլաշաւի,
 Որպէս երգը հէք պիւլպիւլի .
 Որպէս տաւիղն էօլեան :

Եւ, հնազանդ ճակատագրիս,
 Իբրև թուռն թեւաոր,

Քուտով թուայ դժնեայ հիւսիս
 Եւ մոռացա՛ր ինձ նոյն օր:
 Բայց ես սրտումս դեռ քո պատկեր,
 Իբր սրբութիւն կրումեմ
 Ես քո ձայնը և քո աչեր
 Լմենայն օր յիշումեմ:

6 Հոկտ. Մոսկուա:

XVI.

ԿԵՍՆՔ.

Տեսե՛լէք արդեօք ծով անդնդային,
 Կրբոր մրրիկը գոտարով վերան՝
 Երազ տանումէ նորան բարկագին
 Եւ նա սրընթաց վազումէ անբան . . .
 Եհա այսպէս է և կեանքը մարդկան:

Տեսե՛լէք արդեօք պատերազմ՝ ահեղ,
 Որտեղ թափվումեն առուններ արեան,
 Որտեղ ընկնումեն շատ զոհեր անմեղ,
 Որտեղ պիտոյ է կովել անվախձան . . .
 Եհա այսպէս է և կեանքը մարդկան:

Տեսե՛լէք արդեօք մի անոյշ երազ,
 Որ ձեզ տանումէ աշխարհ գիւթական . . .

Դուք նորան գրկել կամիք հանապազ,
 Բայց նա թռչումէ աղանու նման . . .
 Եհա այսպէս և կեանքը մարդկան:

Նոյեմ. Մոսկուա:

XVII.

Շագանակագոյն, գրաւիչ աչեր,
 Իմ մտտող կեանքը հալ ու մաշ արիք
 Եւ սառն, չորցած աչերիցս նուէր
 Եղի արցունքներ դուք պահանջեցիք:

Ես ձեզ տեսնելով՝ իսկոյն զգացի
 Սրտումս կրակ և վշտեր քնքոյշ
 Եւ ճանաչեցի, որ սէրը կուսի
 Եւ դառն լայն է և մեղք անոյշ:

Եւ այժմ՝, աւա՛ղ . . . ես հառաչումեմ,
 Հեռո՛ւ ձեզանից, դժնեայ հիւսիսում.
 Ես արտասովումեմ, ես գանդատումեմ.
 Բայց ինձ, ի՞նչ անեմ, ոչ որ չէ լսում:

Եւ դուք ինձ գուցէ ատումէք հոգևով.
 (Գիտեմ չէք սիրում երգչիս հիբացած)
 Եթէ ատումէք — ասացէք շուտով, —
 Ոչի՛նչ, կ'տանեմ . . . նոր չէ այդ հարուած:

Բայց երբ յաւիտեան ծածկեմ իմ աչեր,
 Եւ անդեմ հոգիս և թաղվեմ անշուք,

Ա՛հ, պէ՛ս ժամանակ, յիշելով իմ սէր՝
 Թափեցէ՛ք վերաս երկու արտասուք :

30 Նոյեմբ. Մոսկուա :

XVIII.

Մ Ե Կ Ց Ե Ղ Լ Ա Ն Ք .

(ՆՈՒԵՐ Ե. Խ. ՈՎ. Ի. Ն.) :

Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր .
 Տեսնումեմ՝ դու էլ ինձ պէս տխուր ես .
 Միմեանց կ'սիրեն երկու թշուառներ, —
 Դու ինձ կ'պատմես վիշտդ, իսկ ես քեզ :
 Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր,
 Մէկտեղ լանք, մէկտեղ թափենք արցունքներ :

Մեզ չեն մեղքանալ բախտաւոր մարդիկ .
 Ով որ ուրախ է՝ գթալ չ'գիտէ .
 Ընցան գնացին օրերս երջանիկ
 Եւ այժմ մեր կեանք միայն սև սուգ է :
 Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր,
 Մէկտեղ լանք, մէկտեղ թափենք արցունքներ :

Թող խնդան բերկրին, որ երջանիկ են :
 Մեզ համար դառն է նոցա խնդութիւն
 Թող նոքա երգեն, թող նոքա պարեն .
 Իսկ մենք կարտասովներ, կողբա՛նք միասին :
 Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր,
 Մէկտեղ լանք, մէկտեղ թափենք արցունքներ :

Մի՛թէ չ'գիտես, որ թշուառ մարդու
 Միակ մխիթարն արցունքն է աղի :
 Արցունք որ թափես, հաւատա՛ ինձ դու,
 Կ'թեթեմանայ վիշտը քո սրտի :
 Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր,
 Մէկտեղ լանք, մէկտեղ թափենք արցունքներ :

Երբոր մենք ուրախ, բախտաւոր լինենք,
 Իսկ նոքա տխուր, հէք, թշուառական,
 Նոքա կարտասովն, իսկ մենք կ'պարենք .
 Սակայն քանի որ չենք հասած դորան,
 Արի՛ մօտեցի՛ր ինձ, թշուառ ընկեր,
 Մէկտեղ լանք, մէկտեղ թափենք արցունքներ :

6 Դեկտ. Մոսկուա :

XIX.

Չ Ե Ռ Ն Ո Ց .

(Շ Է Լ Լ Ե Ր.) :

Գաղանանոցին առջևը նստած՝
 Սպասումէր կուռյն Պրանցիսկոս արքայն
 Եւ նորա չորս կողմն շատ բարձրաստիճան
 Մեծամեծ մարդիկ և քաղցրահայեաց
 Ծաղկազարդ կանայք : Ամենքը ապշած՝
 Բարձր պատշգամբից նայումէին ցած :
 Եւ ահա արքայն նշան մը տուեց, —
 Իսկոյն մօտակայ լայն դուռը բացուեց

Եւ մի յամբարայլ

Եւ ինձ գուրս եկաւ ,

Եւ ուն մունջ նայեցաւ

Եւ յո գեհ ու այն գեհ ,

Երկար յորանջեց

Եւ բաշը շարժեց

Եւ ձիգ ու երկար

Պետին տարածուեց :

Եւ կրկին արքայն նշան մը տուեց

Եւ շուտով երկրորդ լայն դուռը բացուեց

Եւ նորա միջին ,

Թուչեւ լով արագ՝

Մի վագր վայրագ

Իսկոյն գուրս վազեց

Եւ, նկատելով հպարտ առիւծին ,

Եւ հեղ մոնչեց ,

Եւ քը իւր կողին

Պոչովը զարկեց

Եւ լեզուն հանեց :

Եւ ահ ու գողով

Պարկած առիւծի

Չորս կողմն շրջելով՝

Չայն սարսափելի

Նանեց և խոպոտ

Եւ մոնչելով՝

Պարկեց նորա մօտ :

Եւ կրկին արքայն նշան մը տուեց

Եւ մի անգամից գունից երևեց

Երկու ընծառիւծ :

Եւ յարձակվեցան գոռ վագրին վերայ ,

Կուռել ցանկալով ,

Բայց նա իւր թաթով

Սաստեց բարկագին և խփեց նոցա :

Եւ իսկոյն առիւծն տեղից վեր կացաւ

Եւ ահեղ գոչեց

Եւ խաղաղութիւն ընդհանուր իջաւ , —

Վ արգրը հանդարտուեց :

Եւ գազանները այդ կատուա նման

Երբեւնաճարաւ

Միմեանց մօտ կարգաւ, հանդարտ պարկեցան :

Մինչդեռ այս այսպէս և յանկարծ ահա

Պատշգամբի ծայրից

Մի փափուկ ձեռնից

Չեռնոց մը ընկաւ գաղանաց վերայ

Եւ ծիծաղելով ,

Կեղծաւորելով ,

Վէլորժ ասպետին օրիորդն դարձաւ

՝ Մտերիմ ասպետ , ձեռնոցս ընկաւ :

Եթէ արգարե դու ինձ սիրումես

Եւնպէս բոցալից , ինչպէս երգուելես , —

Չեռնոցս կառնես

Եւ ինձ կ'ըբերես : “

Եւ նոյն բողոքին շտապ քայլերով
 Գէլորտ ասպետը ցած իջանումէ
 Եւ հրէշների մէջը մտնելով .
 Ըրձակ համարձակ ձեռնոցն առնումէ :
 Եւ զարմանումեն և սարսափումեն
 Ըսպետը և կանայք , . . .
 Կա վեր է գալիս —
 Ըմենայն կողմից նորան գովումեն
 Եւ քաղցր հայեացքով ,
 Կարծես թէ նորան
 Բախտ խոստանալով՝
 Օրիորդն անձայն .
 Յառաջ է ելնում . բայց նա ձգումէ
 Չեռնոցը ուղիղ նորա երեսին
 Եւ անբաւական ձայնով ասումէ .
 ,,Չեղնից, օրիորդ, ես վարձ չեմ ուզում...
 Եւ նոյն բողոքին մտքից հանումէ
 Իւր գեղեցկուհուն :

22 Գեկտ. Մոսկուս :

XX.

ԱՆՅՈՑՍ ՍԷՐ .

(ՆՄԵՆՈՂՈՒԹԻՒՆ) :

Ես օրհնումեմ այն սուրբ օրը,
 Երբ ողջ անխարհ մոռացած՝
 Յայանումէի իմ վշտերը,
 Փափուկ կուսին մօտ նստած :

Ես օրհնումեմ դառն թոյնով
 Լի բաժակը մահաբեր,
 Որ շրթունքիս մօտեցնելով .
 Կոյսը բերեց ինձ նուէր :

Ես օրհնումեմ այն վեշտ սիրոյ,
 Ըյն հառաչանք և այն լաց,
 Եւ հեծութիւնք, և ողբ հոգւոյ,
 Եւ խոր ծո՞վը արտասուաց :

Օրհնեա՛լ լինի այն մանուկ կոյս,
 Ըյն հրաշագեղ, սուրբ շրեշտակ,
 Որի յառաջ այնպէս անյոյս
 Ողբումէի միայնակ :

23 Գեկտեմ. Մոսկուս :

XXI.

Ե Ր Գ Ի Զ .

(ԳԵՕԹԷ) :

,,Ի՞նչ ձայնեմ լսում դրան յեանից,
 Ի՞նչ երգ է հնչվում կամրջի վերայ :
 Թող մեր առաջև այդ երգ ոգելից
 Դահլիճում կրկին հնչվի հիմա :
 Ըյս ասաց արբան — պաժը դուրս վաղեց,
 Պաժը յետ դարձաւ — արբան հրամայեց .
 ,,Թող ներս գայ, կոչի՛ր ձերունի երգչին :
 ,,

,,Ողջոյն ձեզ, ողջոյն, ազնիւ պարոններ .
 Ողջոյն ձեզ, սիրուն և համեստ կանայք :
 Ինչ շքեղ երկինք, աստղը աստղի մօտ .
 Ո՛վ գիտէ դոցա ազգն ու անուններ :
 Թող իմ աչքերը ապշած, զմայլած՝
 Եյս շքեղազարգ դահլիճի միջին
 Օբսանք չ'ինդրեն, թող նոքա ծածկվին :

Երգիչը իսկոյն աչքերը ծածկեց
 Եւ բարձրաբարբառ, անուշիկ երգեց . --
 Խիղախ ասպետքը ուրախ նայեցին
 Եւ գլուխները կանայք կախեցին :
 Երբայն ծերունուն սաստիկ հաւանեց
 Եւ երգին համար հրաման տուեց
 Մի ոսկի շղթայ պարգևել երգչին :


,,Ինձ մի՛ պարգևիր դու ոսկի շղթայ .
 Վո այդ պարգևը ասպետներուդ տուր,
 Որոց հայեացքից անվախ և սրտեայ,
 Թշնամու նիզակն ջարդ ու փշուր
 Վետին է ընկնում, տուր քո կանցլերին
 Եւ թող ոսկեղէն այդ ծանր բեռը
 Միւս բեռներին հետ պահէ միասին :

,,Ես տաղ եմ ասում, իբրև մի թուշուն,
 Որ ճիւղի վերայ նստած է ազատ .
 Եյն անոյշ տաղը, որ իմ շրթունքում՝
 Ես համարումեմ պարգև լիառատ :

Թէ համարձակվեմ՝ մի բան կ'ինդրեմ .
 Հրաման տուր բերել ոսկի բաժակում
 Թանկագին գինի, որ անուշ անեմ :

Շրթունքին տարաւ և խմեց գինին . --
 ,,Ո՛հ, ամրացուցիչ, զու՛ւրճ ըմպելի
 Ո՛հ, այն երանի՛ր երջանիկ տնին,
 Որն որ այս փոքրիկ շնորհքը ունի :
 Վո՛հ եմ ձեզանից : Երբոր խնդագին
 Չեզ բախտը ժպտայ — դուք ինձ յիշեցէք
 Եւ Վ՛հ՛ Երարչեց ինձ պէս գոհացէք :

30 Գեկա: Մոսկուս :



1881 թ.

XXII.

Ի ՄԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ Բ.,

ԱՄԵՆՈՂՈՐՄ ԿՅՅՍԵՐ ԲՈՒՄՅՑ :

Մ առախլապատ երկինք ողբան, ողբայ երկիր սգալի,
Ողբան հրեշտակք ի յերկինս, ողբան մարդիկ ի յերկրի.
Ողբան, կոծին, հեծեծաձայն բողբո բառնան առ Աստուած,
Ողբան, հեղուն յորդահասան վտականի արտասուեաց :

Եւ ծաղկազարդ, պերճապսակ ահա հանգէի ի դագաղ
Ամենողորմ, գթած մեր Հայր, ի բուն մտեալ ի խաղաղ.
Եւ զաւակունք առաքինիք շուրջանակի դագաղին
Արտասուեախառն աչօք հային ի հօր իւրեանց անշունչ զին :

Այնպէս շիրտս, մինչև ցայժմ դու մնացեր անսասան,
Օ ի ամբարիշտ չարագործ ոմն տացէ կենաց քոց վախճան.
Տէր և իշեան հօր ազգի, անվերջ, անբաւ քահմանաց,
Աւաղ, այժմ նեղ գերեզման միայն և եթ քեզ մնաց :

Ո՛վ Աղատիւ քրիստոնէից, ճշմարտութեան սուրբ
պաշտպան,
Աղատեցիր զքո եղբարսդ և զո՛հ դարձար սեաւ մահուան.
Ո՛վ դու Աբբայ քաջարապուկ, ո՛վ դու Հայր մեր ողորմած,
Հանգիր խաղաղ ի դագաղիդ, հանգիր ի բուն հրեշտակաց :

Երախտագէ՛տք դուք հպատակք, զի՞ թախճադէմ այդ-
պէս լայք .

Չէք ի կարի շունչ տալ անշունչ զիոյն, թէ և միշտ
սգայք :

Ի մեռանել աստ ծնանի ամենայն ոք ի մօրէ .

Այդպէս կամի՛ Աս որ եստեղծ զամենայն ինչ յոչնչէ :

Սա կենդանեօք ելից զպարտ և հայրենեաց և մարդկան .

Սա կատարեալ մարդ էր, որպէս պարտ է լինել քրիս-
տոնեայն .

Արդ յիշատակ սորա անմահ կացցէ մնացցէ ի սիրտս մեր .

Որպէս Ինքն իսկ անմահ իցէ ի յերկինս մերձ ի Տէր :

3 Մարտի . Մոսկուա :

XXIII.

Հ Ա Մ Ե Ս Ա Տ Ս Ի Թ Ի Ն .

Երբ տեսնումեմ փայլուն աստղեր

Երկնքումը կապուտակ, —

Քո գրաւիչ սև սև աչեր

Յիշումեմ այն ժամանակ :

Երբ նոր բացուած վարդ եմ տեսնում ,

Գարնան զարդը սիրելի, —

Քո թշերը միտս եմ բերում ,

Ո՛վ հրաշագեղ Հայկուհի :

Երբ հնչվումէ տաղը անոյշ

Սիրող երգիչ — պիւլիւլիւլի , —

Ինձ թուումէ, որ քո քնքոյշ
Չայնեմ լսում, Ընձկալի :

Երբ կանգնած եմ ես պարտիզում,
Իմ չորս կողմը — պարզ գիշեր, —
Ոգևորուած քեզ եմ յիշում,
Իմ Գիցուհի, իմ սուրբ Սէր :

23 Մարտի. Մոսկուա :

XXIV.

Յ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Իմ չորս կողմը կանաչ գարուն
Սեղմ հոսումեն առուններ
Եւ Լրարչին սուրբ օրհնութիւն
Գեղգեղումեն թռչուններ :

Եւ ցնծումէ ողջ բնութիւն .
Օգը մաքուր և քաղցրիկ .
Լճենայն տեղ կենդանութիւն ,
Լճենայն ոք երջանիկ :

Իայց ես միայն հառաչումեմ
Լճատեղ, դժնեայ հիւսիսում .
Օտար երկրում թառամում եմ
Գեռ իմ ծաղիկ հասակում :

Ո՛հ, տուէք ինձ ազատութիւն ,
Թեթև թևեր արծիւի .

Եւ կ'թուչեմ ես զուարթուն
Գէպ ի հարաւ սիրելի :

Գէպ ի հարաւ, դէպ ի հարաւ,
Օննդավայր իմ քաղցրիկ,
Ուր կապուտակ երկինք անբաւ,
Ուր ոսկեփայլ, մեղմ ալիք :

Ուր քաղցր երազ իմ մանկութեան
Ընցաւ գնաց ծուխի պէս,
Ուր ես անհոգ՝ տաղ խնդութեան
Երգումէի մշտապէս :

Ուր առաջին անգամ սուրբ սէր
Սրտիս խորքում զգացի
Եւ թրջելով իմ չոր աչեր .
,,Ես սիրո՞ւմ եմ" ասացի :

Ուր հարազատք իմ կենումեն,
Եւ քնքոյշ քոյր և ծեր մայր,
Ուր ամենքը ինձ սիրումեն,
Ուր դրա՞խտ է ինձ համար :

Լճնտեղ, այնտեղ ես կողջունեմ
Կանաչ գարուն ծաղկալից ,
Լճնտեղ մաքուր օգ կ'ծծեմ,
Լճնտեղ, հեռո՞ւ հիւսիսից :

Եւ կ'իննդամ և կարտասովեմ
Ո՛հ, ինչ քաղցր է երազել...

Ի՜նչ է ցնորք, ես կարող չեմ
Լզատ թռչուն մը լինել:

4 Այր. Մոսկուս:

XXV.

Դ Ա Ն Բ Ա Ն Ա Գ Ի Ր .

Գոչեց փոթորիկ և թառամեցաւ
Նորարոյս ծաղիկ գարնան օրերի:
Լյսպէս, երբոր քեզ մահը մտեցաւ,
Փչեցի՜ր հոգիդ, ո՞վ չայ պատանի:

Փչեցիր հոգիդ և ծածկվեցան
Շագանակագոյն, գրաւիչ աչեր:
Թողիր աշխարհը, մտար գերեզման,
Չքացաւ լոյսը և պատեց գիշեր:

Եւ ահա անուշ ննջած ես հիմա,
Լզատ աշխարհի հոգսերից ունայն.
Եւ չես մասնակից այժմ առօրեայ
Ոչ մարդկան լացի և ոչ խնդութեան:

2 Մայիսի. Մոսկուս:

XXVI.

Յ Ո Ւ Ս Ա Յ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Քաղցր ժպտումէ համայն բնութիւն:
Փայլում է արև: Մանկական խաղով
Նանդարտ հոսումէ գեղեցիկ առուն:
Բացվել է վարդը: Լնոյշ տաղերով
Սփոփումէ տխուր սրտերը սոխակ:

Սփոփումէ տխուր սրտերը.... բայց իմ,
Բայց իմ ցաւերով լցուած այս սիրտը
Գժուար կ'լինի երգիչ — սոխակին
Շատ գժուար սփոփել: Իմ սրտի վիշտը
Նազիւ փարատի հողեղէն էակ:

Ես ծնած օրիցս միշտ ունեցելեմ
Ինձ ընկերակից միայն տխրութիւն,
Ես ծնած օրիցս ցայժմ չ'գիտեմ
Ինչ է խնդութիւն. ես օրն ի բուն
Ողջ իմ կեանքու մը միայն լացել եմ:

Միայն լացել եմ. Բայց գիտէ՞ք ինչպէս:
Ծածուկ, լուռ ու մունջ: Իմ արտասուքը
Լնմիտ ամբոխից թաքուցելեմ ես,
Իմ բիւր ցաւերը, իմ լացն ու սուգը
Ես անսիրտ մարդուն երբէք յայտնած չեմ:

Ի՞նչ անսիրտ մարդը կարող է անել :
 'Նա հոգ կ'տանի առաւել իրէն
 Քան մի օտարին : 'Նա կարէ լսել,
 Օտարի վեշտը, յետոյ կեղծօրէն
 Յաւակից լինել, ապա հեռանալ :

Ես դժոխային անգամ բոպէքում
 Հպարտ եմ եղել : Ես չեմ ցանկացել,
 Ծուներ խոնարհած՝ ունայն տշխարհում
 Ընարժան գործքով բաղդը վայելել .
 Սուտը չէ կարող ճշմարիտ բաղդ տալ :

Ես երկար, երկար սուրբ ճշմարտութիւն
 Ի զուր պտրելեմ : Երբէք չեմ հասած
 Իմ նպատակին : 'Նենգ, խաբէութիւն,
 'Նախանձ, քէն ու ոխ, պատիւ անարգած .
 Ըհա ինչ գտայ ես այս աշխարհում :

Եւ սարսափեցայ և անիծեցի
 Ըյդ չարիքները : Կատարեալ մի մարդ
 Լինել ցանկացայ ես և ուխտեցի
 Փշերի միջից քաղել միայն վարդ .
 Բայց շատ դժուար էր այդ ինձպէս մարդուն :

Ես մի հրաշագեղ, մի անմեղ աղջիկ
 Քնքոյլ սիրեցի : 'Նորա աչերում
 Գտայ իմ դրախտ : Ըն, նորա փոքրիկ
 Փափկամորթ ձեռների, այտեր վառվռուն,
 Ընուշ հայեցուած սիրտս այրեցին :

Եւ սուրբ էր սէրս, պղատոնական .
 Ես միայն ժպիտ, մի քաղցր հայեացք
 Որոնումէի և երանութեան
 Համար բաւ էր այդ : Ես միշտ զմայլւած՝
 'Նայումէի այն երկնային դէմքին :

Երկնայի՛ն էր նա : Ո՛հ, այնպէս քնքոյլ,
 Ըյնպէս գեղեցիկ, որ եթէ նորան
 Սէկը տեսանէր, լսէրայն անոյշ
 Պիւլպիւլի ձայնը, մինչև յաւիտեան
 Ստքից չէր հանի և չէր մոռանայ :

'Նորա շրթունքը կարմիր, վարդագոյն
 Երբ բացվումէին, մի եղեմային,
 Ո՛հ, մի գերբնական ձայն էր արձակվում՝
 Եւ կախարհումէր նա իւր լսողին
 Եւ մոլորվումէր մարդը ակամայ :

Բայց այդ Հրեշտակը երկար չմնաց
 Ըյդպէս կախարդիչ — շուտով անարժան
 Վճառականի ամուսին գնաց
 Եւ կորաւ անգամ հետքը սրբութեան,
 Բայց սէրը չ'մեռաւ իմ վառ սրտի մէջ :


Ո՛հ, քանի քանի՛ անբուն գիշերներ
 Թրջելեմ բարձս աղի արցունքով :
 Ըրցունքիս վկայ եղելն պատեր,
 Սիայն լսկ պատեր . էլ այնտեղ ոչ ով,
 Ոչ ով չէր լսում մրմունջս անվերջ :

Սակայն նենգաւոր բազդը շուտ խաբեց
Ընփորձ էակին : Մա աղքատ եղաւ ,
Կարօտ չոր հացի , կեանքը անիծեց
Եւ վերջին յոյսը փրկութեան շեջաւ :
Հպարտ առիւծը դարձաւ հեղ կատու :

Եւ կրկին, կրկին ես արտասովեցի,
Ինձ շատ ծանր էր տեսանել նորա
Ընրախտութիւնը: Ես աղօթեցի,
Որ Երարիչը իւր զորհին խղճայ :
Հաստատ չէ բազդդ , ո՛վ մահկանացու :

.....
.....
.....
.....
.....

Յունիս. Մոսկուս :



1882 թ.

XXVII.

ԱՆՊԱՐԿԵԾՑ ԱՂՁԻԿ :

Ո՛հ, դու մի՛ մերժիր քո անզօր դատրին
Մա զղջացել է -- Մերիւր դու նորան ,
Որպէս ներումէ խեղճ մեղաւորին
Եկեղեցու մէջ Հայր սուրբ քահանան :

Մայրիւր աչերուն տես ի՛նչ սրբութիւն
Ըրտայայտվումէ նոցա մէջ հիմա ,
Մայրիւր ինչպէս նա աղօթք է անում ,
Մայրիւր ինչպէս նա ողբումէ ահա :

Մա մոլորվելէր և ճշմարտութեան
Մորից ճանապարհն կամի ելանել .
Ընցեալը տալով խոր մոռացութեան՝
Մորից նա կամի ապրել ըսկըսել :

Մա հեկեկումէ ծունր խոնարհած՝
Ընարատ կուսի պատկերին առջև . --
Մորան կ'լսէ մարդասէր Մտուած ,
Մորան կ'տայ նա նոր կեանք , նոր արև :

Բայ գիբեդ, հիլ հայր և շուտ ընդունիր
 թշուառ աղջկանդ : 'Նա արդէն շուտով
 Պիտի ազատվի --- դու նորան ներիր
 Եւ թող ազատվի նա իւր հօր ձեռքով :

28 Յունվարի. Թականրոզ :

XXVIII.

Հ Ա Յ Ե Ա Տ Ք .

Կախարդիչ աչեր
 Սի սիրուն կուսի ,
 Որպէս երկնքի
 Հողշողուն աստղեր ,
 Եւ յօր ես տեսայ :

'Նա բարբառումեր ,
 Որպէս մի սոխակ ,
 Որպէս աղանեսակ ,
 'Նա գեղեցիկ էր
 Եւ շարժիչ վերայ :

Որպէս մի մանկիկ ,
 Եւ պտուղներ անմեղ ,
 Որպէս թիթեռնիկ ,
 Թեթեռ էր այնտեղ
 Իւր շարժուածքով նա :

Եւն աչերուն մէջ
 Եւ երանութիւն

Եւ արբայութիւն
 Եւ վայելք անվերջ
 Եւ կեանքն իմ գտայ :

Վերաս նայեցան
 Եւդ երկու աչեր ,
 Կարծես իւրեանց սէր
 Ինձ լուռ ու անձայն
 Խոստանումէին :

Սիրտս հասկացաւ
 Եւդ խօսակցութիւն
 Եւ աչքս իսկոյն
 Պատասխան տուաւ
 Գեղեցիկ կուսին :

Եւ , որպէս երազ ,
 Եւդ երկու աչեր ,
 Եւդ չքնաղ պատկեր ,
 'Նայեցան վերաս
 Եւ անհետացան :

Ես չեմ մոռանար
 Հայեացքը նորա ,
 Թող նա մոռանայ ,
 Բայց ես անդադար
 Կ'իշեմ նորան :

Եւ երբոր կրկին
Մի տեղ տեսանեմ, --
Եւ պատլով կասեմ,
,,Ների՛ր ինձ, անգին,
Ես քեզ սիրո՞ւմեմ“:


22 Մարտի. Թականրոգ:

Վ. Ե. Բ. Գ.



Յ Ը Ն Կ

| 1879 թ. | | Երես. |
|---|--|-------|
| 1. Որբ մանուկ | | 9 |
| 2. Գիշեր | | 11 |
| 3. Վարդիս | | 12 |
| 4. Ախ, մի երգիր այդ մեղեդի | | 13 |
| 5. Զօրականք Վարդանայ | | 14 |
| 6. Մտառի Աբբայ | | 14 |
| 7. Մանկութիւն | | 16 |
| 8. Դատապարտեալ | | 18 |
| 9. Հեռու երկիր [Թռաւ, փախաւ | | 20 |
| 1880 թ. | | |
| 10. Առաջին Սէր | | 21 |
| 11. Ի մահ Զ. Մ. | | 22 |
| 12. Յ Յունիսի | | 24 |
| 13. Նուէր | | 25 |
| 14. Մինեօն | | 26 |
| 15. Ա. Մ. Ա. | | 27 |
| 16. Կեանք | | 28 |
| 17. Շագանակագոյն, դրաւիչ աչեր | | 29 |
| 18. Մէկտեղ Լանք | | 30 |
| 19. Զեռնոց | | 31 |
| 20. Անյոյս Սէր | | 34 |
| 21. Երգիչ | | 35 |
| 1881 թ. | | |
| 22. Ի մահ Աղերսանդրի Բ. | | 38 |
| 23. Համեմատութիւն | | 39 |
| 24. Յանկութիւն | | 40 |
| 25. Դամբանադիր | | 42 |
| 26. Յուսահատութիւն | | 43 |
| 1882 թ. | | |
| 27. Անպարկեշտ աղջիկ | | 47 |
| 28. Հայեացք | | 48 |



Գինն է 30 հոսք.

16709

2013

